

Համարը
Տիպը Համաձայնագիր
Սկզբնաղբյուրը ՀՀԱԳՆՊՏ
2002.06.12/3(3)

Ընդունող մարմինը Հայաստանի
Հանրապետություն

Ստորագրող մարմինը
Վավերացնող մարմինը
Ուժի մեջ մտնելու ամսաթիվը 25.10.2001

Տեսակը Մայր
Կարգավիճակը Գործում է
Ընդունման վայրը Երևան

Ընդունման ամսաթիվը 26.07.2001

Ստորագրման ամսաթիվը 26.07.2001
Վավերացման ամսաթիվը
Ուժը կորցնելու ամսաթիվը

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ ՍՏԱՆԴԱՐՏԱՑՄԱՆ,
ԶՓԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՍԵՐՏԻՖԻԿԱՑՄԱՆ ԿԱՐԶՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՆԴԿԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐԻ ԲՅՈՒՐՈՅԻ ՄԻՋԵՎ ՍՏԱՆԴԱՐՏԱՑՄԱՆ,
ՍԵՐՏԻՖԻԿԱՑՄԱՆ ԵՎ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐՈՒՄ
ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հ Ա Մ Ա Ձ Ա Յ Ն Ա Գ Ի Ր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ ՍՏԱՆԴԱՐՏԱՑՄԱՆ,
ԶՓԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՍԵՐՏԻՖԻԿԱՑՄԱՆ ԿԱՐԶՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՆԴԿԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐԻ ԲՅՈՒՐՈՅԻ ՄԻՋԵՎ ՍՏԱՆԴԱՐՏԱՑՄԱՆ,
ՍԵՐՏԻՖԻԿԱՑՄԱՆ ԵՎ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐՈՒՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ
ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ստանդարտացման,
չափազիտության և սերտիֆիկացման վարչությունը և Հնդկաստանի Հանրապետության
ստանդարտների բյուրոն (այսուհետ՝ Կողմեր),

առևտրատնտեսական հարաբերություններում տեխնիկական խոչընդոտների վերացման
և գիտական ու տեխնիկական զարգացումը խթանելու նպատակով,

հաշվի առնելով ստանդարտացման, սերտիֆիկացման և հավատարմագրման
բնագավառներում գործունեության կարևորությունը գիտության, տեխնոլոգիաների և
տնտեսության մեջ փոխազդեցության կապերի զարգացման համար՝ իրենց երկրներում գործող
օրենքներին և կանոնադրություններին, ինչպես նաև համագործակցության գործընթացին և
քաղաքականությանը համաձայն,

համաձայնեցին ներքոհիշյալի մասին.

Հոդված 1

Կողմերը, ելնելով իրենց փոխադարձ շահերից, պայմանավորվեցին համագործակցել
ստանդարտացման, սերտիֆիկացման և հավատարմագրման բնագավառներում՝ սույն
Համաձայնագրին և իրենց օրենսդրությանը համապատասխան:

Հոդված 2

Կողմերը աշխատանքներ կիրականացնեն սերտիֆիկացման ընթացակարգերի (ինչպիսիք են որակի համակարգի սերտիֆիկացումը, արտադրանքի սերտիֆիկացումը և այլն) ներդաշնակեցման, սերտիֆիկացման մարմինների և փորձարկման լաբորատորիաների հավատարմագրման արդյունքների, փորձարկման արձանագրությունների և սերտիֆիկատների փոխադարձ ճանաչման ուղղությամբ:

Հոդված 3

Կողմերի միջև համագործակցությունը ընդգրկում է տեղեկատվության և փորձի փոխանակում՝ համատեղ աշխատանքների կատարում հետևյալ ուղղություններով՝

- ստանդարտացման աշխատանքների, ընթացակարգերի և ստանդարտների կիրառման կարգի կազմակերպում,
- մասնակցություն միջազգային և տարածաշրջանային ստանդարտացման աշխատանքներին,
- ստանդարտների նախագծերի մշակում և դրանց ընդունում,
- ստանդարտների կիրառում:

Հոդված 4

Համագործակցությունը Կողմերի միջև կիրականացվի՝

- ստանդարտացման և սերտիֆիկացման հիմնադիր և այլ նորմատիվ փաստաթղթերի փոխանակման միջոցով,
- փորձի փոխանակման, քննարկումների, ուսուցման և այլնի համար փորձագետների փոխայցելության միջոցով,
- տարբեր աշխատանքներում համատեղ հետազոտություններին և զարգացմանն ուղղված տեղեկատվության փոխանակման միջոցով,
- Կողմերի կազմակերպած սեմինարների և գիտաժողովների միջոցով,
- սերտիֆիկացման և ուսուցման բնագավառներում երկկողմանի ծառայությունների կազմակերպման համար փոխադարձ հնարավորությունների հետազոտման միջոցով,
- փորձարկման արդյունքների հաշվետվության փոխադարձ ճանաչման նպատակով, հիմնվելով միջազգային չափանիշների վրա, ուսումնասիրել միմյանց կազմակերպչական կառուցվածքը, լաբորատոր փորձարկումների ընթացակարգերը, լաբորատորիաների հավատարմագրման և զարգացման ընթացակարգերը:

Հոդված 5

Կողմերը համաձայնել են, որ ստացած տեղեկությունները կարող են օգտագործվել առանց որևէ սահմանափակման, եթե մյուս Կողմը չի նշել դրանց գաղտնիության մասին: Այդ տեղեկությունները երրորդ Կողմին կարող են փոխանցվել միայն մյուս Կողմի համաձայնությամբ:

Հոդված 6

Կողմերը կհամագործակցեն ստանդարտացման, սերտիֆիկացման և հավատարմագրման զանազան միջազգային և տարածաշրջանային կազմակերպություններում՝ միմյանց աջակցելով միջազգային և տարածաշրջանային այն կազմակերպություններին մասնակցելուն կամ անդամագրվելուն, որոնց անդամն է Կողմերից մեկը:

Հոդված 7

Անհրաժեշտության դեպքում սույն Համաձայնագրի դրույթները կկոնկրետացվեն Կողմերի միջև կնքվող լրացուցիչ համաձայնագրով և/կամ արձանագրություններով:

Հոդված 8

Սույն Համաձայնագրի մեկնաբանման և կիրառման հետ կապված բոլոր հարցերը կլուծվեն փոխադարձ խորհրդակցությունների, ինչպես նաև տարբեր մակարդակի բանակցությունների միջոցով:

Համաձայնագրի դրույթներից բխող աշխատանքների իրականացման ֆինանսավորումը կիրականացվի փոխադարձ համաձայնությամբ:

Հոդված 9

Սույն Համաձայնագիրը ուժի մեջ կմտնի այն օրվանից, երբ Կողմերը կժանուցեն միմյանց դրա ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ բոլոր իրավական ընթացակարգերի կատարման մասին:

Համաձայնագիրն ուժի մեջ կլինի հինգ տարի և ինքնաբերաբար կերկարաձգվի յուրաքանչյուր հաջորդ հնգամյա ժամկետի համար, եթե Կողմերից որևէ մեկը գրավոր չհայտնի իր ցանկությունը վերջինիս գործողությունը դադարեցնելու մասին ոչ ուշ, քան Համաձայնագրի գործողության ժամկետի լրանալուց վեց ամիս առաջ:

Յուրաքանչյուր Կողմ կարող է դադարեցնել սույն Համաձայնագրի գործողությունը մյուս Կողմին գրավոր ծանուցման միջոցով:

Համաձայնագրի գործողությունը դադարում է մյուս Կողմի՝ այդ հայտարարագիրը ստանալուց վեց ամիս հետո:

Կատարված է Երևան քաղաքում 2001 թվականի հուլիսի 26-ին՝ երկու բնօրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն, ինգլիզերեն և անգլերեն լեզուներով, ընդ որում բոլոր տեքստերն էլ հավասարազոր են:

Սույն Համաձայնագրի մեկնաբանման ընթացքում տարաձայնություններ առաջանալու դեպքում կգերակայի անգլերեն տեքստը:

Կողմերը համաձայնում են օգտագործել անգլերենը որպես աշխատանքային լեզու:

Համաձայնագիրն ուժի մեջ է մտել 2001 թվականի հոկտեմբերի 25-ից: